

հաւասացելոց համար: Նոյնպիսի բղթածրարի մը բովանդակութիւնն եր զոր կարդաց Ս. Կիւրեղ Եպիսկոպոս՝ Նփեսոսի ժողովին մէջ, ըստ Մանսիի: Ինչպէս եկեղեցւոյ վարդապետութեանց աւանդական մեկնութիւնները, նոյնպէս սնօրինական Ս. Տեղեաց աւանդական տեղեկութիւնները հաւանաբար ունեին իրենց յիշատակարանները՝ հաղորդելու համար ուխտաւորներուն՝ որոնք իրենց կարգին պիտի տարածէին զայնս քրիստոնէայ աշխարհին մէջ:

Դարերու ընթացքին, հազարաւորներ ուխտաւորութեամբ այցելած են Նրուսադէմ, շերմեռանդ հաւաստով երկրպագելու Ս. Տեղեաց. մեծ քիւ մը կը կազմեն նշանաւոր եպիսկոպոսները եւ վարդապետները որ տեղեակ կը մնային Ս. Տեղեաց աւանդութիւններուն՝ պրպտելով վերջնոցս վերաբերեալ արձանագրութիւնները: Այդպիսիներուն համար Յերոնիմոս իր նամակներուն միոյն մէջ (46 հոգ) կը գրէ. «Երկար կ'ըլլայ ժամանակագրական կերպով բուել, Տիրոջը Համբարձումէն մինչեւ ցայսօր, այն եպիսկոպոսները, մարտիրոսները, եկեղեցւոյ վարդապետները՝ որ Նրուսադէմ եկած են, եւ կը հաւատանք քե նուազ բարեպաշտութիւն, նուազ գիտութիւն եւ անկասար առաքինութիւն պիտի ունենային՝ երբ երկրպագած չըլլային Քրիստոսի այն Ս. Տեղերուն մէջ, ուրկէ Աւետարանը սկսաւ հառազայթել Խաչափայտին վրայ»:

Յերոնիմոսի բուած նշանաւոր անձնաւորութիւններէն զատ, Դ. դարուն իբր ուղեգիր եւ ուխտաւոր Նրուսադէմ եկած են Պորսոյի անանուն ուխտաւորը, որուն օրագրութիւնը կը պարունակէ շատ շահեկան տեղեկութիւններ Ս. Տեղեաց մասին. նոյնպէս Էրեքիա Կոյսը՝ Արեւելք կատարած իր ուխտաւորութեան օրագրական